ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/100

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4238-2022 գրությամբ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.03.2022թ. թիվ Ե/40/457-22 գրության հիման վրա, 14.03.2022թ. թիվ 26/26-1/4238-2022 գրությամբ նախաձեռնել է «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն տեղեկություն է ստացել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 26/26-1/4238-2022 թիվ 14.03.2022թ. գրությամբ հարուցվել է ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում ընդգրկելու մասին:

ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն համաձայն չէ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու որոշմանը:

Կարծում եմ, որ ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու հիմքեր չկան:

Համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի հունվարի 14-ի թիվ 3Բ-21 օրենքի 1-ին մասի 6-րդ կետի՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցանկում, եթե.

ա) խախտել է պայմանագրով նախատեսված կամ որպես գնման գործընթացի մաս ընդունված պարտավորությունները, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի խզման կամ գնման գործընթացին այս մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

բ) նա, որպես ընտրված մասնակից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց.

գ) նա հրաժարվել է հետագա գնման գործընթացի մասնակցությունից հայտերի բացումից հետո:

ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն չի կատարել վերը նշված գործողություններից ոչ մեկը:

ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն եղել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22» ծածկագրով աճուրդի մասնակից:

Համաձայն 1.1 կետի. Էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի, գնման առարկան «խողովակ» -ի գնումն է: Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև դրա բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվող պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն Հրավերի N 5 հավելվածում:.

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» փաստաթղթում ասվում է. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի համաձայն' միշտ օգտագործեք «կամ համարժեք» արտահայտությունը:

Համաձայն 4.3 կետի 3-րդ մասի. հայտում մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքների ամբողքական նկարագրություն).

Ղեկավարվելով էլեկտրոնային աճուրդի հրավերի նշված դրույթներով՝ ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն ներկայացրել է առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Առաքման համար առաջարկվել է Խողովակ 273x8 OST 34-42-658 -84 St20 ըստ TU14-3-190-82/GOST8732-78, GOST8731-74 (Ատոմէներգոպրոեկտ ԲԲԸ-ի գրավոր համաձայնության համաձայն):

Գնահատող հանձնաժողովի նիստի 22.02.2022թ. N 2 արձանագրության համաձայն. Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ին վերացնել գրանցված անհամապատասխանությունները մինչև կասեցման ժամկետի ավարտը. «ԳՕՍ 8732078, ԳՕՍ 8731-74» հատվածը պետք է հանվի առաջարկեող արտադրանքի տեխնիկական բնութագրից: (համաձայն «Ատոմէներգոպրոեկտ» ԲԲԸ-ի գրավոր համաձայնության):

«ԲԻՈՏԷԿ» ՍՊԸ-ն չի վերացրել այդ անհամապատասխանությունները, քանի որ ապրանքներն առաջարկվել են ԳՕՍ 8732078, ԳՕՍ 8731-74 առաքման համաձայն: Առաքման թույլատրելիությունը նախապես համաձայնեցվել է «Ատոմէներգոպրոեկտ» ԲԲԸ-ի հետ:

«Ատոմներգոպրոկտ» ԲԲԸ-ն Մեծամորի (Հայկական) ատոմակայանի գլխավոր նախագծողն է:

Խողովակ 273x8 OST 34-42-658 -84 St20 ըստ TU14-3-190-82-ի ներկայումս չի արտադրվում, ուստի ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ն առաջարկել է համարժեք փոխարինում: Պատվիրատուն չհամաձայնվեց համարժեք փոխարինմանը:

Համաձայն թիվ 2.1 արձանագրության. 01.03.2022թ.-ից գնահատող հանձնաժողովի նիստում ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ի դիմումը գնահատվել է անբավարար և մերժվել: Գնման ընթացակարգն անվավեր է ճանաչվել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք.

ԲԻՈՏԷԿ ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում»:

«ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/100 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.03.2022թ. թիվ Ե/40/457-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության կողմից (այսուհետ «ՀԱԷԿ» ՓԲԸ) խողովակների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԻՕՏԷԿ» ՍՊ ընկերությունը (ООО «БИОТЭК»): Մասնակցության հայտի գնահատման արդյունքում՝ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պայմաններին: Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ին առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները (Հավելված 1-ը և տեխնիկական բնութագիրը): Սահմանված ժամկետում «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել արձանագրված անհամապատասխանությունների շտկում:

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 42-րդ կետով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ գնահատող հանձնաժողովը ս/թ մարտի 1-ի թիվ 2.1 որոշմամբ մերժել է «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը և գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/100 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/100 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար խողովակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության մասնակցության հայտի Հավելված 1-ում (Դիմում) չափաբաժնի համարի փոխարեն նշված է ձեռք բերվող ապրանքի անվանումը, Ընկերությունը տեխնիկական բնութագրում ավելացրել է ГОСТ-եր, որոնք նշված չեն հրավերում: Համաձայն հրավերի մատակարարվող խողովակները պետք է համապատասխանեն ОСТ 34-42-658-84-ին, որում նշված է, որ խողովակները պետք է մատակարարվեն ТУ14-3-190-82-ի համաձայն (որը նշված է նաև հրավերում): ОСТ 34-42-658-84 նշված է նաև, որ ГОСТ 8731-74-ի (որը նշված է «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում) համաձայն մատակարարվող խողովակները համապատասխանում են СНиП-111-31-78-ին (СНИП 3.05.05-84), որը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Անհրաժեշտ է հեռացնել հրավերին չհամապատասխանող ավելացված «ГОСТ8732-78, ГОСТ8731-74 (по писменному согласаванию АО Атомэнергопроект)» հատվածը առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2022թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված դիմումը և տեխնիկական բնութագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4238-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 04.03.2022թ. թիվ Ε/40/457-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված

ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար խողովակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության մասնակցության հայտի Հավելված 1-ում (Դիմում) չափաբաժնի համարի փոխարեն նշված է ձեռք բերվող ապրանքի անվանումը, Ընկերությունը տեխնիկական բնութագրում ավելացրել է ГОСТ-եր, որոնք նշված չեն հրավերում: Համաձայն հրավերի մատակարարվող խողովակները պետք է համապատասխանեն ОСТ 34-42-658-84-ին, որում նշված է, որ խողովակները պետք է մատակարարվեն ТУ14-3-190-82-ի համաձայն (որը նշված է նաև հրավերում): ОСТ 34-42-658-84 նշված է նաև, որ ГОСТ 8731-74-ի (որը նշված է «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրում) համաձայն մատակարարվող խողովակները համապատասխանում են СНиП-111-31-78-ին (СНИП 3.05.05-84), որը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Անհրաժեշտ է հեռացնել հրավերին չհամապատասխանող ավելացված «ГОСТ8732-78, ГОСТ8731-74 (по писменному согласаванию АО Атомэнергопроект)» հատվածը առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2022թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված դիմումը և տեխնիկական բնութագիրը և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.03.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/4528-2022 գրությամբ խնդրել է հայտնել ե՞րբ է Պատվիրատուի կողմից «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ին ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը և ի՞նչ բովանդակությամբ, ինչպես նաև տրամադրել ծանուցման արտատպումը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.03.2022թ. թիվ Ն/26/5398-2022 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ–ին ավտոմատ ծանուցման եղանակով 25/02/2022թ. ժամը 17:32-ին ուղարկվել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ նամակ՝ կցելով էլեկտրոնային ուղերձ նամակի արտատպումը հետևյալ բովանդակությամբ.

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով***

<u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, ընդ որում՝ ծանուցման մեջ մանրամասն նշվել են շտկման ենթակա անհամապատասխանությունները, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2022/100 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված առարկությանը, ապա հարկ եմ համարում հայտնել, որ առարկությամբ վկայակոչված փաստական հանգամանքները չեն հիմնավորվել՝ որևէ ապացույց ի հավաստումն հայտնածի չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.03.2022թ. թիվ 26/26-1/4238-2022 գրությամբ «ԲԻՕՏԷԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**